

Հաշվետվություն՝ ըստ բնագավառների. Ֆինանսներ

<ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին> ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին ծրագրերով և միջոցառումներով 2020թ.-ի համար հատկացվել է 3393733400 (երեք միլիոնը երեք հարյուր իննսուներեք միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) դրամ գումար, որից.

- 2020 թվականի ընթացիկ ծախսերի համար 416202800(չորս հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր) դրամ,

- մարզպետարանի պահպանման համար՝ 416202800(չորս հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր երկու հազար ութ հարյուր) դրամ գումար,

- մարզպետարանի կարողությունների զարգացման համար՝ 12754400 (տասներկու միլիոն յոթ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր) դրամ գումար,

- մշակույթի ոլորտին հատկացվել է 20107800 (քսան միլիոն մեկ հարյուր յոթ հազար ութ հարյուր) դրամ գումար,

- Կրթության ոլորտին հատկացվել է 2063520800 (երկու միլիարդ վաթսուներեք միլիոն հինգ հարյուր քսան հազար ութ հարյուր) դրամ գումար,

- Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով՝ 77919940 (յոթանասուներեք միլիոն ինը հարյուր տասնինը հազար ինը հարյուր քառասուն) դրամ գումար,

- մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ նորոգում ծրագրով՝ 120144000 (մեկ հարյուր քսան միլիոն մեկ հարյուր քառասունչորս հազար) դրամ գումար,

- ՀՀ կառավարության 2020 թվականի պահուստային ֆոնդից ՀՀ Վայոց ձորի մարզին հատկացվել է 582317500 (հինգ հարյուր ութսուներկու միլիոներեք հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումար, այդ թվում սուբվենցիոն ծրագրերի իրականացման համար հատկացվել է 544217900 (հինգ հարյուր քառասունչորս միլիոներկու հարյուր տասնյոթ հազար ինը հարյուր)դրամ գումար,

- 2020թ.-ի համար պետբյուջեով <Աջակցություն համայնքներին> ծրագրով 42136640 (քառասուներկու միլիոն մեկ հարյուր երեսուսուներեք հազար վեց հարյուր քառասուն) դրամ գումար, իսկ սահմանամերձ համայնքներին՝ 52831000 (հիսուներկու միլիոն ութ հարյուր երեսունմեկ հազար) դրամ գումար:

-Ներկայացնում մարզի համայնքների 2020 թվականի բյուջեներին ամրագրված տեղական եկամուտների հավաքագրման արդյունքները.

2020 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մարզի 8 համայնքների տեղական բյուջեներով ընդամենը եկամուտներ են նախատեսվել 3119253800 (երեք միլիարդ մեկ հարյուր տասնինը միլիոն երկու հարյուր հիսուներեք հազար ութ հարյուր) դրամ գումար, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 2665855800 (երկու միլիարդ վեց հարյուր վաթսուներեք միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար ութ հարյուր) դրամ գումար, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 85.5%-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 1000933600 (մեկ միլիարդ ինը հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր)դրամ գումար, փաստացի հավաքագրվել է 951704300 (ինը հարյուր հիսունմեկ միլիոն յոթ հարյուր չորս հազար երեք հարյուր) դրամ գումար կամ կատարվել է 95.1%-ով, որի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմում է 7.5 տոկոս:

Նշեն, որ համահարթեցման կարգով ՀՀ 2020թ. պետական բյուջեից մարզի համայնքների համար նախատեսվել է 1282644600 (մեկ միլիարդ երկու հարյուր ութսուներկու միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար վեց հարյուր) դրամ գումար դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

ՀՀ Վայոց ձորի մարզում 2020 թվականի քաղաքաշինության բնագավառում կատարված աշխատանքների մասին

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ 2020թ-ին կատարվել է 1մլրդ 380.4մլն. դրամ կառուցման, հիմնանորոգման, վերանորոգման և ճանապարհաշինական աշխատանքներ.

Այդ թվում՝

Եղեգնաձորում՝ 408.7 մլրդ. դրամ,

Արենիում՝ 678,174 մլն դրամի,

Եղեգիսում՝ 3.6 մլն.դրամի,

Ջառիթափում՝ 103.196 մլն. դրամի,

Ջերմուկում՝ 187.8 մլն. դրամի աշխատանքներ:

Սուբվենցիոն ծրագրերով 2019թ-ին հատկացված, սակայն չկատարված 9 ծրագրեր շարունակվել և ավարտվել 2020 թվականին , որոնց ընդհանուր գումարը կազմում է 43.7 մլն. դրամ: Դրանք են՝

- Արենի, Աղավնաձոր, Արփի, Չիվա, Ռինդ բնակավայրերի փողոցների ասֆալտապատում:

- Ջերմուկ քաղաքի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգում և արդիականացում:

- Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրի մշակույթի տան ջեռուցման համակարգի տեղադրում, դռների ու պատուհանների փոխում և շենքի տանիքին այլընտրանքային արևային էներգիայի համակարգի տեղադրում:

- Եղեգնաձոր համայնքի Անդրանիկի փողոցի վերանորոգում, Արսենյան 9, Մամիկոնյան 12 բնակելի շենքերի բակի, Գլաձորյան փողոցի , Կամոյի 2-ա բնակելի շենքի բակի նորոգում: 2019թ-ից 2020 թվական տեղափոխված ծրագրերից ընթացքի մեջ է Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները:

2020թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերին և դրանց շրջանակում իրականացված աշխատանքներն ըստ համայնքների՝

Արենի համայնքում ընդհանուր թիվը կազմել է 355.043 մլն. դրամ, այդ թվում՝

Ազարակաձոր բնակավայրում իրականացվել է 24,143 մլն դրամի,

Աղավնաձորում՝ 44,38 մլն դրամի,

Արենիում՝ 80,65 մլն դրամի,

Արփիում՝ 9,06 մլն դրամի,

Գնիշիկում՝ 7.098 մլն. դրամի,

Ելփինում՝ 41.732 մլն. դրամի,

Խաչիկում՝ 36.82 մլն. դրամի,

Չիվայում՝ 48.0 մլն. դրամի,

Ռինդում՝ 50.56 մլն. դրամ արժողությամբ համայնքային ենթակառուցվածքների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ:

Համայնքի Արենի, Աղավնաձոր, Ելփին, Խաչիկ, Չիվա, Ռինդ բնակավայրերում տեղադրվել է մեկական հակակարկտային կայան, ընդհանուր գումարը՝ 12.6 մլն. դրամ :

Նույն ծրագրով Գլաձոր համայնքում իրականացվել է 101.87 մլն. դրամի,

Եղեգիս համայնքում՝ 133.144 մլն. դրամի,

Եղեգնաձոր համայնքում՝ 18.3 մլն. դրամի

Մայիշկա համայնքում՝ 9.4 մլն. դրամի,

Ջառիթափ համայնքում՝ 205.385 մլն. դրամի ,

Ջերմուկ համայնքում՝ 283.75 մլն. դրամի չափով կառուցման և վերանորոգման աշխատանքներ :

2020թ. Վայոց ձորի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերով իրականացված շինաշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 1 մլրդ. 106,8 մլն ՀՀ դրամ, որից համայնքների ներդրումը կազմում է 937,3 մլն ՀՀ դրամ:

Հաշվետու տարում գուտ համայնքային բյուջեներով կատարվել է ընթացիկ և հիմնական նորոգման աշխատանքներ, որոնց ընդհանուր գումարը կազմել է 28.94 մլն դրամ:

Նախատեսված էր 2020թ. փոքրաքանակ երեխաներով համալրված դպրոցների տիպային նոր շենքերի կառուցում մարզի Եղեգիս , Չիվա և Գոմք բնակավայրերում: Եղեգիսում կատարվել են հին դպրոցի շենքի ապամոնտաժման և նորի կառուցման հողային աշխատանքները: Իսկ Չիվա և Գոմք բնակավայրերում մրցույթները կկայանան 2021 թվականին:

2020 թվականի ընթացքում Վայոց ձորի մարզում տարբեր ծրագրերով իրականացվել է ընդհանուր թվով 2 մլրդ 560 մլն. դրամի կառուցապատման, վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ:

Ճարտարապետության բնագավառում աշխատանք են տարվել`

Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների լիարժեք ուսումնասիրման և խոչընդոտ առաջացնող շինությունների վերացման ուղղությամբ:

Հողհատկացման աշխատանքներ են կատարվել Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում հիվանդանոցի նոր շենքի կառուցման նպատակով :

Ուսումնասիրվել և առանձնացվել է մարզի քարաթափման առավել վտանգավոր 3 գոտիները և ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ-ի կողմից ստեղծված աշխատանքային խմբին:

Քայլեր են ձեռնարկվում մարզի 27 բնակավայրերի գազիֆիկացման ուղղությամբ (մարզի 8 համայնքների 44 բնակավայրերից գազաֆիկացված է 17-ը): Նշեմ. որ համայնքների ամբողջական գազաֆիկացումը կարևոր քայլ է անտառների պահպանման և էկոլոգիական խնդիրների լուծման գործում:

2020 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում կատարվել է 3մլրդ 714մլն. Դրամի սահմաններում ճանապարհաշինական աշխատանքները:

-Մարզի միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ձևաչափի ընթացիկ և ամառային ընթացիկ պահպանության աշխատանքների կատարման համար ծախսվել է 452.3 մլն. դրամ:

Վայոց ձոր մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել և ավարտվել են հետևյալ աշխատանքները.

1)Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ101.4 - կմ108.4 հատվածի հիմնանորոգում, ընդհանուրը 7.0կմ` 1մլրդ 011 մլն. դրամ արժողությամբ:

2)Մ2 -Զառիթափ-Նոր Ազնաբեր -Նախիջևանի սահման հանրապետական նշանակության 23.5 կմ երկարությամբ ավտոճանապարհի 14 կմ հատվածի հիմնանորոգում, ընդհանուր արժեքը` 1մլրդ 180 մլն. դրամ:

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել են ճանապարհաշինական հետևյալ աշխատանքները՝

Մ2-Գետափ 2.766 կմ ավտոճանապարհի հիմնանորոգում, որի ընդհանուր արժեքը կազմել է 378.2 մլն. դրամ և S-9-21 (Շատին) - Հորբատեղ 6.5 կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգում, ընդհանուր գումարը կազմել է 693.2 մլն. դրամ:

Գյուղատնտեսության բնագավառ

Մարզի բոլոր շահագրգիռ անձանց, ֆերմերների, իրավաբանական և ֆիզիկական անձանց մանրամասն ներկայացվել են գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից օժանդակության ծրագրերի նոր տարբերակները, որի արդյունքում, 2020 թվականի ապրիլի մեկի դրությամբ, մարզում գյուղատնտեսության օժանդակության ծրագրերից օգտվել է 336 շահառու, ընդհանուր առմամբ տրամադրվել է 1.2 մլրդ դրամի չափով վարկ՝ 0% տոկոսադրույքով:

Խաղողագործություն, գինեգործություն

Կազմակերպվել է հանդիպում-քննարկում մարզի խաղող արտադրողների, մարզից խաղող մթերողների և ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնագետների մասնակցությամբ՝ խաղողի մթերումների հետ կապված հարցերի վերաբերյալ:

2020 թվականին մարզում խաղողի սպասվող աննախադեպ առատ բերքի իրացման խնդիրը (COVID-19-ով պայմանավորված, գինու սպառման ցածր ծավալներով) լուծելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի միջնորդությամբ, ՀՀ կառավարության կողմից <Արենի> տեսակի 1 կգ խաղողի մթերման համար տրամադրվել է 70 դրամ սուբսիդավորում, որի **արդյունքում մարզում արտադրված 7500 տ. խաղողից 3900 տ. մթերվել է սուբսիդավորմամբ :**

Անասնապահության բնագավառ՝ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է եղել 19622 գլուխ խոշոր եղջերավոր և 12821 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ, 3284 գլուխ խոզ, 98046 թև թռչուն, 22883 փեթակ մեղվաընտանիք:

Մարզի 44 բնավայրերում իրականացվել են բրուցելյոզ, լեյկոզ, մաշկաբորբ, սիբիրախտ, էմկար, դաբաղ և խոզերի ժանտախտ հիվանդությունների տարծումը կանխելուն ուղղված պետ. պատվերով նախատեսված բոլոր անասնաբուժական կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները:

Համակարգվել է Վայոց ձորի մարզի ամառային հեռագնա՝ Ջերմուկի արոտավայրեր Արարատի և Արմավիրի մարզերից ներկրվող խոշոր և մանր եղջերավոր կենդանիների շարժը՝ անհրաժեշտ փաստաթղթերի առկայության ապահովման պայմանով: 2020թ. ընթացքում նշված ամառային արոտավայրերում պահվել են 15011 գլուխ մանր եղջերավոր և 1346 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

Բույսերի պաշտպանության գծով կատարվել է 2000հա վարելահողերի վրա մկնանման կրծողներով և իտալական մորեխով վարակավածությունը որոշելու, 1560 հա խաղողի և 575 հա պտղատու այգիների վնասատուների առկայությունը գնահատելու նպատակով մոնիտորինգ: Հոկտեմբեր ամսվա ընթացքում մարզի 7 համայնքներին տրամադրվել է 51.6 լիտր բրոմադիալոն մկնասպան թունաքիմիկատ՝ 670 հա մշակաբույսերի պաշտպանության համար:

Մարզի բոլոր բնակավայրերում կատարվել է ոռոգման ներտնտեսային համակարգերի գույքագրում: 2020 թվականի հուլիսի մեկի դրությամբ <Եղեգնաձոր> ՋՕԸ-ի կողմից ջրտուքը կազմել է 10.5 մլն մետր/ խորանարդ:

2020 թ մարզում արտադրված գյուղատնտեսական բերքի վերաբերյալ քանակական տվյալներն ըստ մշակաբույսերի՝
հացահատիկ և հատիկաբերողներ՝ 1740 տ,
կարտոֆիլ՝ 1730,
բանջարա-բոստանային՝ 4955տ,
կերային՝ 134000 տ,
տեխնիկական մշակաբույսեր՝ 265 տ,
պտուղ՝ 3400տ
խաղող՝ 8500տ:

Պարտադիր սպանդանոցային մորթի անցնելու գործընթացը կարգավորելու նպատակով կազմակերպվել են բազմաթիվ հանդիպում քննարկումներ՝ միա արտադրողների և մթերողների հետ: Զառիթափ համայնքում գտնվող միակ գործող սպանդանոցի տնօրինության հետ մշակվել է հայտարարության ձև՝ սպանդանոցային մորթի պայմանների, մատուցվող ծառայությունների, վճարումների վերաբերյալ և տրամադրել համայնքապետարաններին:

Սպանդանոցների կառուցման նախագծերի և սարքավորումների ձեռք բերման, հուսի վերամշակման աշխատանքների վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ էկոնոմիկայի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններ, որոնց մի մասը ընդգրկվել են վերջնական ծրագրերում:

Գյուղատնտեսական տեխնիկա

<ՀՀ-ում Գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալություն՝ լիզինգի պետական աջակցություն> ծրագրով գյուղ տեխնիկա և գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու նպատակով մարզի 30 շահառուների տրամադրվել է 3, 4 մլրդ դրամ գումար:

<Carmac-2> ծրագրով 80/20 տոկոսային համաֆինանսավորմամբ մարզի Ռինդ բնակավայրին և Վերնաշեն բնակավայրի <Արոսոգտագործողների սպառողական կոոպերատիվին> տրամադրվել է 2 ական միավոր <Բելառուս 82.1> 82 ձիաուժ հզորությամբ անվավոր տրակտորներ:

Վերջիններիս տրամադրվել է նաև մեկ միավոր <Բելառուս 1221> 125 ձիաուժ հզորությամբ տրակտոր և դիզելային շարժիչով ձեռքի մեկ խոտհնձիչ: Մարզում առկա է 516 միավոր գյուղ տեխնիկա և 393 միավոր գյուղատնտեսական գործիքներ:

Հաշվետու տարում կաթ մթերող և վերամշակող 6 գործարանների կողմից մթերվել է 930 000լ կաթ, արտադրել՝ 132 տոննա պանիր: Իսկ Եղեգնաձորի պահածոների գործարանը մթերել է մոտ 47տ բանջարեղեն (սոխ, սխտոր, խաղողի տերև և այլն):

2020 թվականին ցրտահարությունից և կարկտահարությունից տուժել են մարզի բոլոր համայնքները: Ընդհանուր առմամբ ցրտահարությունից վնասվել է 252.9 հա պտղատու այգի, կարկտահարությունից՝ 49 հա պտղատու այգի: Կարկտահարության վնասները նվազեցնելու նպատակով Արենի, Աղավնաձոր, Ռինդ, Գնիշիկ, Ելփին, Գետափ բնակավայրերում վերջին տարիներին տեղադրվել են 12 հակակարկտային կայաններ, (960հա ծածկողականությամբ)՝ լիարժեք ծածկողականության համար անհրաժեշտ են ևս 16 կայան:

Արենի և Եղեգիս համայնքներում 2020թ. տնկվել են 250 000 ուռենու տնկիներ: Ծառատունկին մասնակցել է 137 մարդ՝ 100 000դր. միջին աշխատավարձով: Աշխատանքներն իրականացվել են COVID-19-ի սոցիալական հետևանքների չեզոքացման ՀՀ կառավարության 15-րդ ծրագրի շրջանակում:

Վայրի կենդանիների (արջերի) կողմից մարզի բնակիչներին պատճառվող վնասների փոխհատուցման խնդրի լուծման նպատակով 2020թ. ապրիլի 15-ին ՀՀ ՎՁ մարզպետարանում կայացել է հանդիպում-քննարկում, որին մասնակցել են մարզում գործունեություն ծավալող բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Քննարկման արդյունքում <Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի>, <Արփա բնապահպանական լանդշավտի>, <Բնության համաշխարհային հիմնադրամի> Հայաստանյան մասնաճյուղի ներկայացուցիչները, որոնք պարտավորվել են իրենց տարեկան բյուջեից ֆինանսական միջոցներ տրամադրել բնակչությանը հասցված վնասները մասնակի փոխհատուցելու նպատակով: Վայրի կենդանու(գորշ արջ) կողմից մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին հասցրած վնասը կազմել է 12511 հազ. դրամ: Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից մարզին անվճար տրամադրվել է 10 հատ էլեկտրական հովիվ:

Նախատեսվել է, ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու տարբերակով, գյուղատնտեսության համար ոչ արդյունավետ 26 հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքեր տրամադրել արևային վահանակների տեղակայման նպատակով: Ներկա պահին արևային վահանակներ՝ տեղադրված է 1.5հա-ի վրա:

Վերահսկողություն է իրականացվել մարզում գործող 34 ՀԷԿ-երի գործունեության վրա՝ օգտագործվող ջրի թույլատրելի չափի և թողքի համապատասխանության առումով:

Գյուղատնտեսական օժանդակության ծրագրերով կառուցվել է՝

- 5 <Խելացի> անասնագոմ,
 - 1.5հա ջերմոցային տնտեսություն,
- հիմնվել է 60հա խաղողի և 21հա պտղատու ինտենսիվ այգի:

Ներդրումային ծրագրերի շրջանակներում Ջերմուկ համայնքի Կարմրաշեն բնակավայրում 140 գլուխ խ/ե կենդանիների մսի արտադրության նպատակով կառուցվել է <խելացի անասնաշենք>, ներկրվել է 100 գլուխ (Ավերդին-անգուս) մսատու ցեղի մայրական հոտ և 40 գլուխ 8 ամսական ցուլիկներ:

Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում հիմնվել է 50 հա ինտենսիվ խաղողի այգի: Ներդրողի կողմից գնվել է 100-120 հա ջրովի վարելահող՝ խաղողի ինտենսիվ այգի հիմնելու նպատակով: 2021-ին նախատեսված է նաև զինեգործարանի կառուցումը:

Դրամաշնորհային ծրագրերի շրջանակում Խաչիկ և Բարձրունի սահմանապահ բնակավայրերում <Դիակոնիա> բարեգործական հիմնադրամի օժանդակությամբ կատարվել է 2հա սխտորի մշակություն, որից ստացված 4.5մլն դրամ գումարը տրամադրվել է մշակությամբ զբաղվող բնակիչներին:

Առողջապահության ոլորտ

Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար 2020 թ. հատկացվել է 777,4 մլն. դրամ գումար: Իրականացվել է 77,6մլն. դրամի վճարովի ծառայություններ՝ որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել է 7299 դրամով:

2020 թ. ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել է 273 ծնունդ, որից 8-ը Արցախի Հանրապետությունից: Պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 66 տեղից հանրապետության բուժհաստատություններ պետպատվերով բուժման և հետազոտման է ուղեգրվել 34 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 4 երեխաներ, իրենց խնամակալների հետ:

Մարտի 16-ից դեկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածի տվյալներով հաստատվել է նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) 1859 դեպք: Փաստացի բուժում է ստացել 760 քաղաքացի: Առողջացած անձանց թիվը՝ 1068: Մահվան դեպքերի ընդհանուր թիվը՝ 31: Մարտի 16-ից դեկտեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում կատարվել է 4617 նմուշառում:

Բժշկական կազմակերպություններում աշխատում է 415 բուժաշխատող: Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի հետ համատեղ կազմակերպվել է 100-ից ավելի միջին բուժաշխատողների վերապատրաստում: Առողջապահության Ազգային Ինստիտուտի հետ համատեղ կազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, հեռուստակոնֆերանսներ, տարբեր կարգի բուժաշխատողների համար, կապված Covid-19-ի ախտորոշման, բուժման, հիվանդության վարման, կանխարգելման խնդիրներ լուծելու գործընթացի իրականացման հետ: Կազմակերպվել է նաև ՀՀ ԱՆ փոխնախարարի և <Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն> ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալի հանդիպումը մարզի բուժհիմնարկների տնօրենների հետ, որտեղ քննարկվել է Covid-19-ի ժամանակ պատվաստումների իրականացման գործընթացը:

Իրականացվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով մարզին հատկացվող դեղորայքի ստացումը և բաշխումը՝ մարզի բուժհիմնարկներին: Սյունիք բարեգործական հիմնադրամի հետ իրակացվել է մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին ստոմատոլոգիական ծառայությունների մատուցում, որի շրջանակում սպասարկվել է մոտ 60 քաղաքացի:

Մարզի բնակչության բուժսպասարկման որակի աստիճանական բարելավման նպատակով, առողջապահական կազմակերպությունները համագործակցել են ՀՎԿԱԿ-ի մարզային մասնաճյուղի և ՀՕՖ-ի առողջապահական բաժնի հետ:

Սոցիալական ապահովության բնագավառ

Բոլորիս է հայտնի, որ 2020 թ. բարդ մարտահրավերների տարի էր, սկզբում՝ COVID 19 համավարակի առիթով հայտարարվեց արտակարգ դրություն, այնուհետև սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի պատճառով՝ ռազմական դրություն, որոնք իրենց հետ բերեցին բազում սոցիալական և առողջապահական խնդիրներ: Սոցիալական լարվածությունը մեղմելու համար, ինչպես նաև հակահամաճարակային կանոնները պահպանելու, տնից ազգաբնակչության անհարկի ելումուտը կանխելու համար 5240 ընտանիքի տրամադրվել է պարենային օգնություն:

Արցախյան երրորդ պատերազմի ընթացքում Վայոց ձորի մարզում հանգրվանած 3 300 արցախցիների համար կ ազմակերպվել է բնակարանով, հագուստով, պարենային, տնտեսական, հիգիենիկ անհրաժեշտ պարագաներով ապահովելու գործընթացը, իսկ պատերազմից հետո աշխատանքներ են տարվել զոհված, անհայտ կորած և վիրավոր զինճառայողների ընտանիքների սոցիալական վիճակով առկա խնդիրները գույքագրելու և դրանք լուծելու ուղղությամբ: 2020 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ Պն և <Զինճառայողների ապահովագրության հիմնադրամ> է ներկայացվել 85 զոհված զինճառայողների գործեր, որոնցից 43-ին տրվել է դրական եզրակացություն: Գործընթացը շարունակվում է:

Աշխատանքներ են տարվում վիրավոր զինճառայողների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու, հնարավորության սահմաններում աջակցելու և տարբեր ծրագրերում

ընդգրկելու ուղղությամբ: ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված կարգով 5 զոհված զինծառայողների ընտանիքների տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր:

2020 թվականին նպաստ է ստացել 1829 ընտանիք, վճարվել է 664.1մլն դրամ նպաստ, իսկ նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 1232 ընտանիքների նշանակվել է հրատապ եռամսյակային դրամական օգնություն, վճարվել է 22.8մլն դրամ գումար : Փոխհատուցում է տրվել 201 քաղաքացու, վճարվել է 36,8մլն դրամ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 1062 գործազուրկ: 2020 թվականին իրականացվել է <Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման> 7 ծրագիր 10,5 մլն դրամ արժողությամբ: Ժամանակավոր զբաղվածություն է ունեցել 38 գործազուրկ, որից 3-ը հաշմանդամություն ունեցող անձինք են եղել: Գյուղերի բնակիչների համար <Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրման> ծրագրում ընդգրկվել է 71 հողօգտագործող:

Մարզում ապրում է 4322 հաշմանդամություն ունեցող անձ: Նրանց և տարեցների համար տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ են մատուցել Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը և <Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցացիան>, որից օգտվել են 110 շահառու՝ տարեց և հաշմանդամություն ունեցող անձինք: Մարզում հաշվառված է 9298 կենսաթոշակառու, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 43483դրամ:

Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից՝ սոցիալական աջակցության նպատակով 611 քաղաքացիների տրամադրվել է դրամական օգնություն, ընդամենը՝ 22,6մլն դրամ:

Մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2020թ. ընթացքում կատարված աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231013.0 հա, որից գյուղ. նշանակության հողեր՝ 189556.8 հա, այդ թվում վարելահող՝ 15787.7 հա, բազմամյա տնկարքներ՝ 2029.1 հա (պտուղ-1060.2հա, խաղող-968.9հա), խոտհարքներ՝ 5058.1 հա, արոտ՝ 92204.8 հա, այլ հողատեսքեր՝ 74477.1հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 6828.3 հա:

Կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից - բարձրարժեքի փոփոխության են ներկայացվել 61.474 հա, որից փոփոխվել է խաղողի այգի՝ 38.474հա, պտղատու այգի՝ 23.0 հա, Գլաձորի համայնքում 39.0հա անջրդի վարելահողերը փոխադրվել են ջրովի վարելահողերի, որոնք ներառվել են մարզի 2020 թվականի հողային հաշվեկշռում: Կատարվել է նաև բարձրարժեքից-ցածրարժեքի փոփոխություններ՝ Վայք համայնքի Ձեղեա բնակավայրի քաղաքացու սեփականություն հանդիսացող 1.052հա պտղատու այգին, Արենի համայնքի 0.68554հա Աղավնաձորի և 0.14554հա Խաչիկի բնակավայրերի իրավաբանական և քաղաքացու սեփականություն հանդիսացող, Զառիթափ համայնքի Արտավան բնակավայրի 0.340հա պտղատու այգին

փոխվել են ցածրաբժեք հողատեսքերի՝ վարելահողերի և գյուղատնտեսական այլ հողատեսքի:

Միջգերատեսչական հանձնաժողովին է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 13 առաջարկություն, որից 8-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն, մնացած 5-ն ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի Եղեգնաձոր և Մալիշկա համայնքներում, հայտնաբերված թերությունների վերացման համար առաջարկություն է ներկայացվել և հստակ ժամկետ տրվել ինքնակամ հողամասի զավթում և ոչ նպատակային օգտագործում 48 և 54 վարչական իրավախախտումների մասին օրենքով :

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համաձայնեցման է ներկայացվել Ջառիթափի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 0.18հա արոտի և Ջերմուկի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 0.10037հա հողերի օտարման առաջարկությունը, որից 0.18 հեկտարի համար տվել է իր դրական եզրակացություն, իսկ 0.10037հա հողամասի օտարման աշխատանքներն ընթացքի մեջ է:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից՝ օտարվել է 80.477 հա, որի ընդհանուր գումարը կազմել է 86508714.5 դրամ. վարձակալությամբ է տրամադրվել օգտագործման 33863.14հա, որի վարձավճարը կազմում է 48079.12 հազ դրամ:

Կրթության՝ նշեմ, որ մարզում գործում է 48 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 2 առանձնացված ավագ դպրոց Եղեգնաձոր, Վայք քաղաքներում և 1 կրթահամալիր Ջերմուկ քաղաքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ: ՀՀ ԿԳՄՄԸ ենթակայությամբ գործող դպրոցներում սովորում է 716 աշակերտ, իսկ ենթակայությամբ գործող 45 դպրոցներում՝ 5874 աշակերտ: Համակարգում աշխատում են 883 ուսուցիչներ, որոնց շուրջ 90%-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Դպրոցներում գործում են 17 նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 180 երեխա:

Համայնքային ենթակայությամբ գործում են 16 մանկապարտեզներ, որոնցում ընդգրկված է 1248 երեխա:

Մարզի բոլոր դպրոցներում գործում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը, որ շնորհիվ սնունդ են ստանում 1- 4-րդ դասարանների 2372 աշակերտներ:

Մարզային ենթակայությամբ գործող 9 դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, որում ընդգրկված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 126 աշակերտ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են հետևյալ աշխատանքները.

-Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը: Մարզային փուլին մասնակցել են 9-12-րդ դասարանների 512 աշակերտներ, որոնցից 48-ը իրավունք են ստացել մասնակցելու հանրապետական փուլին.

Շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերի լրացման համար կազմվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել 12-րդ դասարանի շրջանավարտների ճշտված անվանացանկը և 9-րդ դասարանի շրջանավարտների

ճշգրտված թիվը: 2019-2020 ուսումնական տարում 9-րդ դասարանն ավարտել են 475, իսկ 12-րդ դասարանը՝ 262 շրջանավարտներ:

-Կազմակերպվել է սեպտեմբերի 27-ից Արցախի հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով Հայաստան տեղափոխված շուրջ 400 աշակերտների ընդգրկումը հանրակրթության մեջ: Նրանք ապահովվել են դասագրքերով, գրենական պիտույքներով, հեռավար ուսուցման համար տեխնիկական միջոցներով:

-Կազմակերպվել է պետական ավարտական և միասնական քննությունների նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Միասնական քննություններին մասնակցել են 218 դիմորդներ, որոնցից 184-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ (շուրջ 84%-ը):

2020 թվականի ընթացքում Մարտիրոսի, Հերիերի, Շատինի, Թառաթումբի Գետափի միջնակարգ դպրոցներում սահմանված կարգով անցկացվել է դպրոցների տնօրենների թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված ընտրություններ:

Նշեմ, որ 2020թ. մարտի 13-ից, համավարակի պատճառով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված, դպրոցներն անցել են հեռավար կրթության: Բոլոր աշակերտների համար առցանց ուսումնառությունը հասանելի դարձնելու նպատակով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից և այլ դոնոր կազմակերպություններից ստացվել և մարզի դպրոցականներին է տրամադրվել շուրջ 700 գրասալիկ և համակարգչային տեխնիկա, անապահով ընտանիքների երեխաներին տրամադրելու համար:

Մշակույթ

Մարզի տարածքում գործում են՝

Երկու թանգարաններ՝

Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը՝ մարզային ենթակայությամբ,

<Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարանը> ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ:

Մարզային ենթակայությամբ գործում են նաև Եղեգնաձորի մանկական երաժշտական դպրոցը և մշակույթի տուն:

Մարզն ունի գերատեսչական ենթակայությամբ երկու պատկերասրահներ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում :

Չորս արվեստի դպրոցներ՝ Վայք, Ջերմուկ քաղաքներում և Արենի ու Աղավնաձոր գյուղերում, գործում են համայնքային ենթակայությամբ:

Մարզում գործում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ մեկ գրադարան, իսկ համայնքային ենթակայությամբ՝ 36-ը:

31 մշակույթի տուն գործում է համայնքային ենթակայությամբ:

Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում սովորողների թիվը 732 է, իսկ դասավանդողների թիվը 92:

Վայք և Եղեգնաձոր քաղաքներում գործում են մանկական ստեղծագործական կենտրոններ և մեկական գեղարվեստի դպրոցներ:

Երաժշտական և արվեստի դպրոցների 28 սաներ մասնակցել են <Վերածնունդ> միջազգային մշակութային փառատոնին: Նրանցից 14-ը արժանացել են տարբեր մրցանակների:

Եղեգնաձորի երաժշտական, Ջերմուկի արվեստի դպրոցները և Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը համերգային ծրագրով և ցուցահանդեսով մասնակցել են <Եվրոպական ժառանգության օրեր> ծրագրին:

Դպրոցական երեխաների համար այցելություններ են կազմակերպվել համերգասրահներ և թանգարաններ:

Մպորտ և երիտասարդություն

Մարզում գործում է 4 մարզական կառույց՝ Եղեգնաձորի մարզադպրոցը ուսումնական 6 խմբով 3 մարզիչով և 135 սաներով, Վայքի մարզադպրոցը՝ 7 խմբով, 4 մարզիչով և 70 սանով, Մալիշկայի մարզադպրոցը՝ 4 խմբով, 2 մարզիչով և 74 սանով և Ջերմուկի սպորտի, զբոսաշրջության, երիտասարդության և մշակույթի կենտրոնը՝ 5 խմբով, 4 մարզիչով և 93 սանով:

Համավարակի պատճառով ծրագրված բոլոր տեսակի զանգվածային մարզական միջոցառումները չեն կայացել:

Այնուամենայնիվ կազմակերպել և անցկացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝

ֆուտբոլի հուշամրցաշար՝ մարզի համայնքների 20 թիմերի մասնակցությամբ, որտեղ հաղթող են դարձել Արենիի պատանի ֆուտբոլիստները, իսկ շախմատի հուշամրցաշարում հաղթող է դարձել Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի թիմը:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին

2020 թվականի ընթացքում <Մանուկ> տեղեկատվական համակարգ է ներմուծվել մարզի կյանքի դժվար վիճակում գտնվող 208 երեխայի վերաբերյալ անձնական տվյալներ:

Առանց ծնողական խնամքի մնացած 16 երեխա վերցվել է տարածքային և կենտրոնացված հաշվառման: Խնամքի հաստատություններում այս պահին գտնվում է 10 երեխա:

Խնամքի հաստատությունների բեռնաթափման ծրագրի շրջանակում <Մանկական զարգացման հիմնադրամի> կողմից սոցիալական աջակցություն է ցուցաբերվել կենսաբանական ընտանիք վերադարձած 10 երեխայի:

Բաժնի համապատասխան մասնագետները մասնակցել են ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչությունում՝ Ջառիթափ և Վայք համայնքներից 4 անչափահասի հետ տարվող քննչական գործողությունների:

2020 թվականի հուլիս ամսին մարզպետարանում կայացել է Վայոց ձորի մարզային դատախազության միջնորդագրի քննարկումը, որի նպատակն էր վեր հանել անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները: Կայացել է հանդիպում մանկավարժական կոլեկտիվի, ծնողների և իրավախախտ երեխաների հետ, վերլուծվել վերջիններիս դրսևորած վարքագիծը, իրականացվել պրոֆիլակտիկ աշխատանք՝ հետազայում կրկնահանցագործությունը կանխելու ուղղությամբ:

Պրոֆիլակտիկ աշխատանք է տարվում մարզի ոստիկանության բաժինների անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման խմբերում հաշվառման վերցված 13 իրավախախտ անչափահասների հետ, անհրաժեշտության դեպքում նրանց կցվում է ավագ դաստիարակ: Այժմ նրանց թիվը նվազել է, հասել՝ 4-ի:

Մարզի 10 դպրոցներում կրթություն է ստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 168 երեխա, որից 40-ը վկայագրվել է 2020 թվականին: Մարզի Գլաձոր, Ջերմուկ, Արենի, Վայք համայնքներում կայացել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստեր, որի ժամանակ քննարկվել են երեխայի և ընտանիքի հետ կապված առանձնահատուկ դեպքեր:

Բաժնի և համայնքային սոցիալական աշխատողների համատեղ աշխատանքի շնորհիվ մարզից Արցախի Հանրապետություն է վերադարձել 316 քաղաքացի: Աշխատանքներն ընթացքի մեջ են: Այցելություն է կատարվում զոհված, անհայտ կորած և վիրավորում ստացած զինծառայողների ընտանիքներ, գնահատելու առկա կարիքները: Կատարվում է Արցախից Վայոց ձորի մարզ տեղափոխված և հաշվառված քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում՝ միգրացիոն ծառայության համակարգ:

ԸԿԵԻՊ բաժնի, Ուկրաինայի, ՌԴ-ի և Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների համագործակցության շնորհիվ Վայք քաղաքի մեկ և Գետափ բնակավայրի երկու երեխա ձեռք է բերել ծննդյան վկայական:

<Դիակոնիա> ԲՀ-ի իրականացրած մարդասիրական նախաձեռնության արդյունքում համավարակի պատճառով սոցիալական ծանր պայմաններում հայտնված և հիմնականում այլ աղբյուրներից աջակցություն չստացած ընտանիքների տրամադրվել է 100 արկղ սննդամթերք և 100 փաթեթ հիգիենայի պարագա, ինչպես նաև մարզի 24 ամսական տրամադրում է սոցիալական աջակցություն՝ սննդի տեսքով:

Հայկական կարմիր խաչի ընկերությունը սկսել է մարզում <Համայնքային ինտեգրված տնային խնամք և առողջ ծերացում> ծրագրի ներդրման աշխատանքները, ակնկալվում է 20 աշխատատեղի ստեղծում:

<Իմ քայլը> հիմնադրամը Եղեգնաձորի համայնքի բազմազավակ ընտանիքի է նվիրել սառնարան, տաք հագուստ, կոշիկ և 500 հազար դրամ՝ առանձնատուն գնելու նպատակով:

Զարգացման ծրագրերի, վերլուծության և զբոսաշրջության բաժին Ներդրումներ և այլ ծրագրեր

Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում մարզպետարանը աջակցել է Թուֆենկյան հիմնադրամի կողմից Արենի գյուղում կառուցվող հյուրանոցային համալիրի (մոտավորապես 700 մլն ՀՀ դրամ արժողությամբ) ենթակառուցվածքների պետական միջոցներով ստեղծմանը:

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում քննարկումներ են իրականացվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի համապատասխան մասնագետների հետ, որոնց ընթացքում ներկայացվել է 5 ծրագիր՝ Արենի բնակավայրում միջոցառումների հրապարակի կառուցում՝ իր ենթակառուցվածքներով, Սմբատաբերդի ճանապարհի վերանորոգում, Ջերմուկի զբոսայգու վերանորոգում, Մարտիրոսի վիմափոր եկեղեցու ճանապարհի վերանորոգում, Շատիվանքի ճանապարհի վերանորոգում:

Ծրագրերից առաջին երեքը հավանության են արժանացել և ընդգրկվել Համաշխարհային բանկի կողմից 2020-2022 թվականներին իրականացվող ծրագրերի ցանկում: Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր և ներկայացվել են ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Եղեգիսի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվել և հիմնանորոգվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի միջով անցնող, Արտաբույնք և Հորբատեղ բնակավայրերն իրար կապող մոտ 6,8 կմ երկարությամբ ավտոճանապարհը, որը հանդիսանում է մարզի զբոսաշրջային կարևոր ուղիներից մեկը, քանի որ ճանապարհի հարակից տարածքում են գտնվում Սմբատաբերդ ամրոցը, Ցախացքար եկեղեցական համալիրը, Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցին և պատմամշակութային այլ հուշարձաններ:

Սուրվենցիոն ծրագրեր

2020 թվականին հաստատված 27 սուրվենցիոն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքներում իրականացվել են խմելու և ոռոգման ջրագծերի, խմելու ջրագծերի գլխամասային կառույցների, կոյուղագծերի, արտաքին լուսավորության ցանցի, մեքենատրակտորային պարկի և հենապատի կառուցման, կրթական և մշակութային օբյեկտների վերանորոգման, ներհամայնքային փողոցների ասֆալտապատման, գազիֆիկացման համալրման աշխատանքներ, ինչպես նաև հակակարկտային կայանների տեղադրում:

Արդյունաբերություն

Մարզի նախալեռնային գոտին համարվում է խաղողագործության շրջան: Հայտնի է հատկապես «Արենի» տեսակի էնդեմիկ խաղողի արտադրությամբ և «Արենի» գինիով, թեև գինու արտադրության մեջ վայոցձորյան արտադրանքը բավականին բազմազան է: Գինեգործությունն այստեղ ունի հազարամյա պատմություն:

Արդյունաբերական համալիրը լրացնում են նաև պանրագործությունը, հանքային ջրերի արտադրությունը: Կան նաև մի քանի փոքր ջրաէլեկտրակայաններ: Մարզի տնտեսության զարգացման մեջ մեծ դեր է կատարում առողջարանային տնտեսության ենթակառուցվածքների ընդարձակումը: